29 ՄԱՐՏԻ 2019 թվականի N 171-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՋԵՌՈՒՑՄԱՆ ՍԵԶՈՆԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Քաջարան համայնքում եղանակային անբարենպաստ պայմանները և ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով՝

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ  Ե Մ

1.Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմում և համայնքի ենթակայության հիմնարկներում ջեռուցման սեզոնի ժամկետը երկարացնել մինչև 2019 թվականի մայիսի 01-ը:

2.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Զոհրապ Առաքելյանին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

2019թ. Մարտի 29

ք. Քաջարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81,
qajarancity@mail.ru , qajaran.syunik@mta.gov.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ԱՊՐԻԼԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ N 172-Ա

## ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 06-Ի N 97-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետարանի 2019 թվականի մարտի 18-ի N 06/01515-2019 գրությունը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաջարան համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 06-ի «Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմը հաստատելու մասին» թիվ 97-Ա որոշման 1-ին կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ:

«1.Հաստատել՝ Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների անհատական կազմը՝

Հանձնաժողովի նախագահ՝ Մանվել Վրեժիկի Փարամազյան - Քաջարան համայնքի ղեկավար

Հանձնաժողովի անդամներ՝ Ավետիսյան Սեյրան - ՀՀ Սյունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ,

Միրզոյան Էդվարդ–ՀՀ Սյունիքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ

Թունյան Ժիրայր - ՀՀ Սյունիքի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՀԳՄՏՍ ԳՀ բաժնի գլխավոր մասնագետ

Անդրեասյան Արմեն- Քաջարան համայնքի ավագանու անդամ

Աթայան Մերուժան- Քաջարան համայնքի ավագանու անդամ

Իսրայելյան Գարիկ- Քաջարան համայնքի ավագանու անդամ

Ստեփանյան Դերենիկ- Քաջարան համայնքի ավագանու անդամ

Գեվորգյան Մարինա - Քաջարան համայնքի ավագանու անդամ:»:

2. Քաջարան համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 06-ի «Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմը հաստատելու մասին» թիվ 97-Ա որոշման 3-րդ կետը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ:

«2.Մրցութային հանձնաժողովի աշխատանքների տեխնիկական սպասարկումն իրականացնող լիազորված անձ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (պաշտոնի ծածկագիր՝ 3.1-10 )Գայանե Ստեփանյանին:»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

2019թ. Ապրիլի 02
ք. Քաջարան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ**
**ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

ք.Քաջարան,Լեռնագործների 4, Հեռ. 0285-3-21-81, Ֆաքս 0285-3-30-22

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**02 ապրիլի 2019թ. թիվ 173-Ա**

ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑ <<ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ>> ՍՊԸ-ԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔԻ ԳԱՆՁՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 24-րդ կետով և‹‹Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին›› ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով, և հիմք ընդունելով <<ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ>> ՍՊԸ-ի տնօրեն էդիկ Օրբելյանի դիմումը

որոշում եմ

Վարչական վարույթի մասնակից <<ԼԵՌ-ԷՔՍ-ԷՆԵՐԳԻԱ>> ՍՊԸ-ի տնօրեն էդիկ Օրբելյանից հօգուտ Քաջարան համայնքի բյուջե գանձել 400 000/չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ, որպես վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154հոդվածի 1-ին մասի համաձայն վարչական տույժի գումար՝ 15-օրյա ժամկետում :

1. Կազմել վճարման ժամանակացույց՝ սահմանված պարտավորությունների վերջնաժամկետ սահմանել 2019թ հուլիսի 26-ը, իսկ պարտավորությունների կատարումը սկսել ս/թ ապիլի 26-ից՝ հաջորդական մարումները կատարել մինչև հաջորդող ամսվա 26-ը, յուրաքանչյուր ամսվա նվազագույն վճարումը սահմանել 100 000/մեկ հարյուր հազարական/ ՀՀ դրամ
2. Պարտավորությունների ամբողջական կամ ոչ պատշաճ կատարման դեպքում այն կկատարվի ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajaran.syunik@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

03 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 174-Ա

## Ա/Ձ ԱԼՎԱՐԴ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ա/Ձ Ալվարդ Կարապետյանի 01.04.2019թ. դիմումը

### *ՈՐՈՇՈՒՄ ԵՄ*

1. Դադարեցնել Շահումյան 9 հասցեում գործող Ա/Ձ Ալվարդ Կարապետյանին պատկանող պարենային խանութում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքը,

2. 11. հունվարի 2019 թվականի N 36- Ա որոշումը համարել ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

20 19 թ.

ք.Քաջարան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆԻ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

04 ապրիլի 2019 թվականի N 175-Ա

### ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 7/9/2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0.002 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԵՅՐԱՆ ՍԱՐՄԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարաման մասին 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 42-րդ հոդվածի 4-րդ մասով ,, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 12.04.2001թ.,, Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին,, թիվ 286 որոշումը, Քաջարան քաղաքային համայնքի ավագանու 26 դեկտեմբերի 2017թվականի 26-Ա որոշումը և հաշվի առնելով Քաջարան քաղաքի Շիրվանզադեի փողոցի թիվ 7 շենքի 35 բնակարանի բնակիչ Սեյրան Սարմենի Հարությունյանի դիմումը՝ *որոշում եմ*

1. ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Շիրվանզադեի փողոցի թիվ 7/9/2 հասցեում համայնքային սեփականություն հանդիսացող /սեփ վկայական N 26032019-09-0015/ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման 0,002 հա հողամասը կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրել Սեյրան Սարմենի Հարությունյանին ՝ ավտոտնակ կառուցելու համար:
2. Հանձնարարել համայնքապետարանի քաղաքաշինության, հողի վերահսկողության, կոմունալ տնտեսության տրանսպորտի և համատիրությունների աշխատանքների համակարգման բաժնի պետ Վ.Գրիգորյանին՝ Սեյրան Սարմենի Հարությունյանի հետ կնքել հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու պայմանագիր 25/քսանհինգ/ տարի ժամկետով, տարեկան 1500*20*0,4=12000 / ՀՀ դրամ վարձավճարով, ապահովելով գույքային իրավունքների պետական գրանցումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

2019 թ ապրիլի 04

ք.Քաջարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք.Քաջարան,Լեռնագործների 4, Հեռ. 0285-3-21-81,
Ֆաքս 0285-3-30-22

# Ո Ր Ո Շ Ու Մ

«05» ապրիլի 2019թ. N176

## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննելով ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Լեռնաձոր գյուղի տարածքում Սերժիկ Բենիկի Արզումանյանի կողմից կատարված վարչական իրավախախտման վերաբերյալ Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմի կողմից 2019 թվականի մարտի 25-ին ներկայացված նյութերը,

պարզեցի՝

Վարչական իրավախախտում կատարած Սերժիկ Բենիկի Արզումանյանը ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Լեռնաձոր գյուղի 3-րդ փողոցի թիվ 18 հասցեում սեփականության իրավունքով իրեն պատկանող 0,1029 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցել է 369,7քմ բնակելի տուն, այսինքն կատարել է արարք, որն առաջացնում է պատասխանատվություն նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ 1-ին մասի 1-ին ենթակետի հոդվածով: Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ, 32-րդ, 219¹ պրիմ, 281-283-րդ հոդվածներով,

որոշում եմ՝

1. Սերժիկ Բենիկի Արզումանյանին վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով նախատեսված խախտման համար ենթարկել վարչական պատասխանատվության, կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք՝ 100.000 ( մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
2. Սերժիկ Բենիկի Արզումանյանի կողմից տուգանքը պետք է վճարվի Քաջարանի համայնքապետարանի 900315202151 հաշվեհամարին սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:
3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:
4.Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշման օրինակը սահմանված ժամկետում հանձնել Սերժիկ Բենիկի Արզումանյանին:

Քաջարան համայնքի ղեկավար Մ. Փարամազյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆԻ**

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

10 ապրիլի 2019 թվականի N 178-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՔԱՋԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹ – ՍՐԱՀԻՆ ԵՎ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի 22-րդ, 24-րդ կետերով և 42-րդ հոդվածի 10-րդ մասով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի դ ենթակետով և հաշվի առնելով ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի քաղաք Քաջարան Աբովյան փ.շ.9 բն 19 բնակչուհի Օլյա Գառնիկի Զաքարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի քաղաք Քաջարան Աբովյան փողոցում գտնվող՝ Օլյա Գառնիկի Զաքարյանին, որպես ժառանգություն ընդունած ժառանգի՝ սեփականության իրավունքով պատկանող խանութ-սրահին և ավտոտնակին (ժառանգության իրավունքի վկայագիր 609-20190401-105-3701835 սեփ. վկայական 1385603) տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Սյունիքի մարզ, Քաջարան համայնք, քաղաք Քաջարան, Աբովյան փողոց, թիվ 9/6:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ**

2019 թ ապրիլի 10
ք Քաջարան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajarancity@mail.ru , qajaran.syunik@mta.gov.am

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
10 ԱՊՐԻԼԻ 2019 թվականի N 179-Ա

### ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ԵՎ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի և 48-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի դրույթներով՝

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Բնակարանային պայմանները բարելավելու նպատակով՝ Քաջարան համայնքում սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ընտանիքների, զոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ բնակարանային պայմանները ուսումնասիրելու և գնահատելու նպատակով ստեղծել հանձնաժողով և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

2019թ.Ապրիլի 10

ք.Քաջարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajarancity@mail.ru
qajaran.syunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

12 ԱՊՐԻԼԻ 2019 թվականի N 180 -Ա

## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ,,ՎԵՐԱԾՆՈՒՆԴ,, 11-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹ- ՓԱՌԱՏՈՆԻՆ ,, ՔԱՋԱՐԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ,, ՀՈԱԿ-Ի ՊԱՐԻ ԽՄԲԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին '' ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 12-րդ հոդվածի 16-րդ կետով՝

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ*

Համայնքապետարանի 08 բաժին 02 խումբ 04 դաս գործառնական դասակարգման 4727 հոդվածից 100.000 /մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամ հատկացնել ,,Քաջարանի արվեստի դպրոց,, ՀՈԱԿ-ի տնօրեն՝ Արմինե Վլադիկի Թումանյանին՝ /նույն. քարտ՝ 002456085, տրված՝ 14.05.2014թ., 061 կողմից/, որպես ծախսերի փոխհատուցում՝ ս/թ ապրիլի 13-ին և 14-ին Երևան քաղաքում կայանալիք ,,Վերածնունդ,, 11-րդ միջազգային մրցույթ – փառատոնին ,,Քաջարանի արվեստի դպրոց,, ՀՈԱԿ-ի պարարվեստի սաների /թվով 6 հոգի/ մասնակցությունը ապահովելու համար և փոխանցել ,,Հայբիզնեսբանկ,, ՓԲԸ 1150039744217 4 քարտային հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

2019թ. ապրիլի 12
ք.Քաջարան

ԿԱՏԱՐՈՂ՝ Ա. ՆԻԿՈՂԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajarancity@mail.ru
qajaran.syunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

12 ԱՊՐԻԼԻ 2019 թվականի N 181 -Ա

## ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՄԽԻԹԱՐ ԱՐՇԱՎԻՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 48-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Մխիթար Արշավիրի Հովհաննիսյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համայնքապետարանի 10 բաժին 07 խումբ 01 դաս գործառնական դասակարգման 4729 հոդվածից 50.000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ հատկացնել Մխիթար Արշավիրի Հովհաննիսյանին՝ /նույն . քարտ՝ 001323781, տրված՝ 12.03.2014թ., 061 կողմից/, որպես դրամական օգնություն և փոխանցել ,,Ամերիաբանկ,, ՓԲԸ 1570012181460400 քարտային հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

2019թ. Ապրիլի 12
ք.Քաջարան

ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՆԻ ՆԻԿՈՂԱՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆԻ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ապրիլի 2019 թվականի N 182 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔ ՔԱՂԱՔ ՔԱՋԱՐԱՆ ԲԱԿՈՒՆՑԻ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՆՈՒԹ ՄՐԱՀԻՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի 22-րդ, 24-րդ կետերով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> թիվ 2387-Ն որոշման և հաշվի առնելով ՀՀ Սյունիքի մարզ քաղաք Քաջարան Շիրվանզադե փողոց շենք5 բն.11 բնակիչ Կարեն Վասակի Թադևոսյանի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ Քաջարան համայնք, քաղաք Քաջարան Բակունց փողոցում գտնվող Կարեն Վասակի Թադևոսյանին սեփականության իրավունքով պատկանող (ծածկագիր 09-007-019-001-01) 0,0036հա սպասարկման հողամասին և 36 ք.մ. խանութ – սրահին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, Քաջարան համայնք, քաղաք Քաջարան Բակունց փողոց թիվ 3/28 ։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

2019 թ ապրիլի 12
ք.Քաջարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

# Ո Ր Ո Շ Ու Մ

15 ապրիլի 2019 թվականի N183 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՔԱՋԱՐԱՆՑ 1-ԻՆ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի 22-րդ, 24-րդ կետերով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> թիվ 2387-Ն որոշման և հաշվի առնելով Մամիկոն Մերուժանի Սահակյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ Քաջարան համայնք, գյուղ Քաջարանց 1-ին փողոցում գտնվող Մամիկոն Մերուժանի Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող (ծածկագիր 09-109-7-6) 0,039հա տնամերձ հողամասին և 60.9 ք.մ./ բնակելի տանը տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, Քաջարան համայնք, գյուղ Քաջարանց 1-ին թաղամաս տուն 30 ։

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

2019 թ ապրիլի 15
ք.Քաջարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajarancity@mail.ru
qajaran.syunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

15 ԱՊՐԻԼԻ 2019 թվականի N 184-Ա

## ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՆՆԱ ՆՈՐԻԿԻ ԻՍՐԱՅԵԼՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 48-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Աննա Նորիկի Իսրայելյանի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համայնքապետարանի 10 բաժին 07 խումբ 01 դաս գործառնական դասակարգման 4729 հոդվածից 70.000 /յոթանասուն հազար/ ՀՀ դրամ հատկացնել Աննա Նորիկի Իսրայելյանին՝ /անձ.՝ AG 0427920, տրված՝ 13.04.2005թ., 041 կողմից/, որպես դրամական օգնություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

2019թ. Ապրիլի 15
ք.Քաջարան

ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՆԻ ՆԻԿՈՂՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajaran.syunik@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ապրիլի 2019թվականի N 185-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1 ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով և հաշվի առնելով Կապան քաղաքի Մ. Պապյան փողոցի թիվ 8 շենքի, 25 բնակարանի բնակիչ Աիդա Արկադիայի Ղուկասյանի դիմումը.

**Որոշում եմ**

1. 2019 թվականի ապրիլի 15-ից լուծված համարել Աիդա Արկադիայի Ղուկասյանի հետ 2014 թվականի հոկտեմբերի 16-ին կնքած՝ անշարժ գույքի վարձակալության պայմանագիրը:

2. Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Մ. ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

2019 թ. ապրիլի 15
ք.Քաջարան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆԻ

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ապրիլի 2019 թվականի N186-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ԲԱՔԻԿԱՎԱՆ 3-ՐԴ ՓՈՂՈՑՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 0.1386 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի 22-րդ, 24-րդ կետերով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> թիվ 2387-Ն որոշման՝ *որոշում եմ*.

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ Քաջարան համայնք, գյուղ Բաքիկավան 3-րդ փողոցում գտնվող, համայնքային սեփականության հանդիսացող 0,1386 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, Քաջարան համայնք, գյուղ Բաքիկավան 3-րդ փողոց թիվ 9/1:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

2019 թ ապրիլի 17
ք.Քաջարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ք.Քաջարան,Լեռնագործների 4, Հեռ. 0285-3-21-81,
Ֆաքս 0285-3-30-22

# Ո Ր Ո Շ Ու Մ

‹‹18›› ապրիլի 2019 թ. N187-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննելով ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Լեռնագործների փողոցի 16 շենքի հարևանությամբ Մխիթար Արշավիրի Հովհաննիսյանի կողմից կատարված վարչական իրավախախտման վերաբերյալ Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմի կողմից 2019 թվականի ապրիլի 01-ի-ին ներկայացված նյութերը /արձանագրություն թիվ 05, 19/03/2019/,

պարզեցի՝

Վարչական իրավախախտում կատարած Մխթար Հովհաննիսյանը ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի լեռնագործների փողոցի թիվ 16շենքի մերձակա տարածքում համայնքային սեփականություն հանդիսացող 0,00265հա հողատարածքի վրա ինքնակամ կառուցել է 53,0քմ արտաքին մակերեսով /43,75քմ ներքին մակերսով/ ավտոտնակ, այսինքն կատարել է արարք, որն առաջացնում է պատասխանատվություն նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով: Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ, 32-րդ, 219[1] պրիմ, 281-283-րդ հոդվածներով,

որոշում եմ՝

1.**Մխիթար Արշավիրի Յովհաննիսյանին** վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մաս 2-րդ կետով նախատեսված խախտման համար ենթարկել վարչական պատասխանատվության, կիրառել վարչական տույժ՝ նշանակել տուգանք՝ 400.000 ( չորս հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
2. Մխիթար Յովհաննիսյանի կողմից տուգանքը պետք է վճարվի Քաջարանի համայնքապետարանի 900315202151 հաշվեհամարին սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:
3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման ՀՀ ԱՆ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:
4.Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:
5. Սույն որոշման օրենքով սահմանված ժամկետում հանձնել Մխիթար Յովհաննիսյանին:

Քաջարան համայնքի ղեկավար Մ. Փարամազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajarancity@mail.ru
qajaran.syunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

18 ԱՊՐԻԼԻ 2019 թվականի N 188-Ա

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԳԵՂԻԻ ԲՆԱԿԻՉ ԱՆԴՐԱՆԻԿ ՌԵՂԻԿԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 48-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Անդրանիկ Ռեղիկի Գալստյանի դիմումը՝

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համայնքապետարանի 10 բաժին 07 խումբ 01 դաս գործառնական դասակարգման 4729 հոդվածից 60.000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ հատկացնել Անդրանիկ Ռեղիկի Գալստյանին՝ /անձն.՝ AN 0689115, տրված՝ 24.10.2013թ., 041 կողմից/, որպես դրամական օգնություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

2019թ. Ապրիլի 18
ք.Քաջարան

ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՆԻ ՆԻԿՈՂՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajarancity@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ապրիլի 2019 թվականի N 189-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴՈԿԱՎԱՆ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ԱՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի 22-րդ, 24-րդ կետերով և 42-րդ հոդվածի 10-րդ մասով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի դ ենթակետով և հաշվի առնելով ՀՀ Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Անդոկավան գյուղի բնակիչ Նելսոն Մեյրանի Հակոբյանի դիմումը՝

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի Անդոկավան գյուղում գտնվող Նելսոն Հակոբյանին՝ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը և սպասարկման հողամասին (սեփականության իրավունքի վկայական՝ 2184118) տալ հասցե Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզ, Քաջարան համայնք, գյուղ Անդոկավան 3-րդ թաղամաս տուն 6:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

2019 թ ապրիլի 18
ք.Քաջարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՔԱՋԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան Լեռնագործների 4, 0285-3-21-81, qajarancity@mail.ru
qajaran.syunik@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

18 ԱՊՐԻԼԻ 2019 թվականի N 190 -Ա

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԱՅԱՆԱԼԻՔ ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ ,,ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ ,, ՊՈԱԿ-Ի ԲՌՆՑՔԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին " ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 47-րդ հոդվածներով և հիմք ընդունելով ,, Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոց,, ՊՈԱԿ-ի տնօրեն Մերուժան Լենդրուշի Աթայանի գրությունը`

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Համայնքապետարանի 08 բաժին 01 խումբ 01 դաս գործառնական դասակարգման 4727 հոդվածից 110.000/մեկ հարյուր տաս հազար/ ՀՀ դրամ հատկացնել ,, Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոց,, ՊՈԱԿ-ի բռնցքամարտի մարզիչ Աշոտ Վլադիսլավի Սաղիյանին /անձ. AM 0533991, տրված` 25.11.2011թ., 061 կողմից/, որպես ծախսերի փոխհատուցում` ս/թ ապրիլի 19-ից 21-ը Սիսիան քաղաքում կայանալիք բռնցքամարտի ներդպրոցական առաջնությանը` ,,Քաջարանի համալիր մանկապատանեկան մարզադպրոց,, ՊՈԱԿ-ի (թվով 10 մարզիկ, 1 մարզիչ) մասնակցությունը ապահովելու համար և փոխանցել ,, ԱՇԻԲ,, ՓԲԸ 2470039774820010 քարտային հաշվին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ

2019թ. ապրիլի 18
ք.Քաջարան

ԿԱՏԱՐՈՂ` ԱՆԻ ՆԻԿՈՒԼՅԱՆ